

Հիմա աստիճանաբար միջոցներ օգտ-
նակ Ընդգլխելիքն Աստուածայանից կը
ապրուի, այսինքն ամէն շարաքի իբր ինկու-
տան հապար, ամէն օր իբր երեւ, հապար,
գործելու, մասկերուն մէջ ամէն մամ իբր
երեւ հապար, եւ ամէն վայրկեան իբրեւ
հինգ օրինակի մէջ հապար մասկուն ամէն
աստուածական մանկերկրորդի մէջ կը հան-
նդգլխելիքն Աստուածայանի մը կամ Նոր
կտակարան մը : Այսչափ օրինակ Աստու-
գլխիք ոչ թէ կը մնան, այլ կը զնուին :

Անգղիա խրախույս եւ նպաստ կու տայ աւելի քան հարիւր եւ յիսուն թարգմանութեանց տպագրութեանը, բայց եւ այնպէս Սուրբ զրոյց աւելի օրինակներ կը ծախուին Անգղիոյ լեզուով քան թէ աշխարհիս ուրի բոլոր լեզուներովը :

ՉԻՆՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իբր տառնուշորս տարի առաջ Բէ- քինի մէջ կայսերական համալսարան մը հաստատուեցաւ : 1869 ին Տոգ .

Մարդին անուն Ամերիկացի անուանի քա- րօղի մը, որ երկար առէն աշխատած էր Չինու մէջ, յիշեալ համալսարանին նախա- քա՛հ կարգեցաւ : Տոգ . Մարդին մօտերս համալսարանին վրայ հետեւեալ նամակը զրկեց Բէքին նստող Ամերիկացի դեսպանին :

« Հիմա 107 աշակերտ ունենք, որոնց 58ը կը սորվին Անգլիերէն, 28ը՝ Գաղիերէն, 17ը՝ Գերմաներէն, 10ը՝ Րուսերէն եւ 14ը օտար լեզու չեն սորվիր : Բոլոր ուսանող- ներէն 56ը կը սորվի մաթեմատիկա, բնա- կան գիտութիւն եւ քաղաքական գիտու- թիւններ, եւ ասանցմէ շատերը օտար լեզուով դասագիրք կը գործածեն :

Ունինք 10 ուսուցիչ որոնց վեցն օտար- ազգի են , եւ չորսը Չինացի, եւ երեք Չի- նացի օգնական ուսուցիչ կայ : Ուսուցիչը ոչ միայն դաս կու տան, այլեւ դասագիրք կը պատրաստեն, եւ արդէն բնական գիտու- թեան, քիմիայի եւ դեսպանագիտութեան վերաբերեալ գիրքեր թարգմանած են :

Ուսանողաց ամէնքն ալ կառավարու- թեան պաշտօններու համար կը պատրաս- տուին, եւ անոնց ծախքը կը արուի կա- ռավարութեան կողմէն : Աշակերտաց եր- կուքն արդէն իբրեւ թարգման Անգղիա գացած են դեսպանին հետ . ուրիշ երկուք ալ Ամերիկայի մէջ Չինու դեսպանատան թարգման անուանուած են, եւ այլք պիտի զրկուին նոյն պաշտօնով ուրիշ մայրաքա- ղաքներ : Այսպէս ուսանողաց պատուաւոր տպագայ մը ունենալու պատեհութիւնը օգտակար աղբջեղութիւն ըրաւ համալսա- րանին վրայ, ինչպէս պարտէզի մը վրայ կ'ընէ դարնան հովը :

Ուսանողներուն թիւը պիտի աւելցուի կանոնաւոր կերպով աշակերտներ տանուե- լով Շանհիչայի եւ Քանթոնի կառավարու- թեան դպրոցներէն : Ուսման ընթացքը կը տեւէ ութ տարի : Կայսերական կառա- վարութեան պաշտօնեաները շատ կը փա- փայնին համալսարանին յաջողութեն, եւ տէրութեան պաշտօնեաները եւ վարչու- թեան ճիւղերուն ղեկավարները կը քա- նուեցան երեք օր տեւող տարեկան ըննութեան : »

Ամերիկացի դեսպանն այս նամակը զրկեց Վաշինկթոն հետեւեալ գիտողութիւնն աւելցնելով .

« Շատ պատճառներ կան կարծելու թէ կառավարութեան մէջ առաւելագոյն ազ- դեցութեան տէր անձինք մեծ համակրու- թիւն ունին Բէքինի համալսարանին վրայ : Չինաստանի պաշտօնեաներն հիմա կ'ըն- դունին թէ իրենց երկիրն արուեստից եւ գիտութեանց կողմանէ շատ ստորին է քան Եւրոպայի եւ Ամերիկայի երկիրները : Այս համոզումը սկսաւ 1859ի պատերազմէն ետքը, մանաւանդ զինուորական արուես- տին եւ ուրիշ օգտակար արուեստներու համար : Ի սկզբան կը կարծուէր թէ բաւա- կան է ուրիշ երկիրներու մէջ շինուած բաներ դործածել, բայց հիմա համոզուած են որ յառաջադիմութիւնը չի կրնար դաժնացուցիչ ըլլալ, բայց եթէ դատարարու- կութեամբ եւ գիտութեանց ծաւալմամբ : Այս է պատճառը որ հարկւարաւոր պատա- նիք Ամերիկա զրկուեցան դատարարակու- թեան համար, եւ համալսարանը բացուե- ցաւ : Այս բաներն արդարեւ սկիզբ միայն են, կարեւոր են սակայն եւ քաջաբերիչ : »




ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ՇԻՆՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԱՅՈՒՂԻՈՅ ԿԱՌԱՅՈՒՆ

ՇՈՂԵՆԱՐԺ ՄԵՔԵՆԱՅԻՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեծամեծ գիւտերը մէկէն յառաջ չե- կան, այլ տակաւ եղան հասուն : Մէկը ցանեց սերմը, ուրիշ մը մշակեց, եւ վեր- ջապէս սերմը բուսնելով եղաւ ծառ :

Կը կարծուի թէ Սըր Իգորադ Նիւթըն ցանեց սերմը սրմէ բուսաւ չոգեչարժ մե- քենան որ երկաթուղւոյ կառքեր կը քաշէ : Նիւթըն առաջարկեց բոլորակ կաթնայ մը շինել երկաթէ, սրուն մէջ չոգի յառաջ

նիւներու վրայ էր, եւ կրնար չարժիլ ետեւ կամ յառաջ : Քիւնեոյ իր մեքենան աւար- տելէն ետքը նաւարանի մը հրապարակին մէջ փորձեց : Ի սկզբան աղէկ քաղեց մե- քենայն , բայց ետքը դժբախտութեամբ քարաշէն պատի մը վարնուելով կործանե- ցաւ : Յետոյ մեքենայն զրուեցաւ ճամ- բու վրայ, բայց տեսնուեցաւ որ չկրցաւ աւելի քան երկու եւ մէկ քառորդ մղոն երթալ մէկ ժամու մէջ : Նաեւ հարկ էր քառորդն անգամ մը կեցունել մեքենայն



ԼԵՌՆ ԵՒԼԵՆՈՒ ՀԱՍԱՐ ՇԻՆՈՒԱԾ ԵՐԿԱՅՈՒՂԻ

դար, եւ դնել զայն կառքի մը վրայ որ ունենար առջեւ ուղեւորի մը համար նստարան, եւ ետեւէն երկայն խողովակ մը երկնար դուրս : Նիւթըն կը կարծէր թէ խողովակէն չոգեոյն ուժգնութեամբ դուրս ելլելը պիտի քաշեցնէր կառքը շի- տակ դեանի վրայ :

Շոգեով կառք քաշեցնելու դաղափարը շարժեց շատ մարդոց հետաքրքրութիւնը, եւ սկսան փորձեր ընել : Այս մարդոց

չոգի յառաջ բերելու համար, քանզի կաթ- ան փոքր ըլլալով չոգին մէկ քառորդի մէջ կը սպառէր : Բայց եւ այնպէս փորձն անյաջող չնկատուեցաւ : Ոմանք կը յա- սային թէ փոխանակ ձիււ այս մեքենա- յով կարելի պիտի ըլլար թնդանօթ քաշել պատերազմի մէջ , ուստի Գաղիոյ պատե- րազմի պաշտօնեայն հրամայեց Քիւնեոյի նոր մեքենայ մը շինել : Այս նոր մեքե- նայն յաջողութեամբ պտոյտներ ըրաւ Բա-



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ՇԻՆԱ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՇՈՂԵՆԱՐԺ ՄԵՔԵՆԱՅԻ

մէկն էր Քիւնեոյ անուն Գաղիացի մը, որ 1729 ին Լորէն ծնած էր : Այս մարդը զօ- րաց մէջ սպայ էր, եւ զինուորական ար- ուեստին վրայ այլեւայլ գիրքեր գրեց : Քիւնեոյ երկու չոգեչարժ մեքենայ շինեց հասարակ ճամբաներու վրայ քաղցնելու նպատակաւ : Առաջին մեքենան երեք ա-

րիզի փողոցներուն մէջ, բայց դժբախտա- պէս օր մը երբ ժամը երեք մղոն արա- դութեամբ կ'երթար, փողոցի մը անկիւնը դառնալու առեւը հաւասարակշռութիւնը կորսնցնելով ինկաւ : Այս պատահարին վրայ մարդոց յարգը կորսուեցաւ մեքե- նային վրայ, եւ կառավարութիւնը ա-

պագային մէջ վտանգի տառճն առ- նելու համար զինարանը դնել տուաւ մեքենայն : Այս եղաւ 1770 ին :

Շոգեչարժ մեքենայն փորձողնե- րուն մէկն ալ Դրեւթիք անուն Անգ- ղիացի մը եղաւ, ծնեալ 1771 ին : Այս մարդը շատ հանճարեղ էր, եւ մեծ յաջողութիւն գտաւ իր փորձերուն մէջ : Այլեւայլ մեքենաներ շինեց, եւ զանաք կաթնայի մէջ խառնեալ չոգ- ւով շարժել տալու գաղափարը ար- ւաւ, բայց չյարաւարեալ իր գիւտը կատարելութեան չհասցուց :

Ուրիշ Անգղիացի մը Սդիվինսըն անուն ունէր այն արութիւնը եւ յարատեւու- թիւնը որ Դրեւթիքի քով պակաս էր : Սդի- վինսըն ծնած էր 1781 ին : 1814 ին շինեց իր առաջին չոգեչարժ մեքենայն որ շատ յաջողութեամբ քաղեց Անգղիոյ մեծամեծ ամխահոնայ մէկուն մէջ երկաթուղւոյ վրայ : 1829 ին Անգղիոյ մէջ չոգեչարժ մե- քենայից մրցում եղաւ կառավարութեան կողմանէ խառնուեալ 500 ոսկին տանե- լու համար, եւ այն մեքենայն զոր Սդի- վինսըն շինած էր՝ լուազոյն դատուեցաւ, եւ անոնք անգամ որ առաջ շէին կարծեր թէ չոգեով կրնայ կառք շարժիլ՝ համազ- ուեցան : Շոգեչարժ մեքենայ մը զոր Սդի- վինսըն շինած էր՝ երեսուն տարի գոր- ծածուեցաւ Անգղիոյ մէջ շինուած առա- ջին երկաթուղւոյն վրայ : Յիշեալ անձն շինուած չոգեչարժ մեքենայ մը դեռ կը պահուի Անգղիոյ մուսարանին մէջ : Այս- պիտի տկար սկզբնաւորութենէ չոգեչարժ մեքենայն կամոց կամոց հասաւ իր այժ- մու կատարեալ ձեւին, եւ հիմա քաղա- քակիրթ աշխարհին գրեթէ բոլոր երկիր- ներուն մէջ չոգեչարժ մեքենայի միջոցաւ երկաթուղեաց վրայ երթեւեկութիւն կ'ըլլայ :

Ճամբորդ տանելու համար առաջին եր- կաթուղին շինուեցաւ Անգղիա 1825 ին , եւ քիչ ետքը Ամերիկայի մէջ շինուեցան երկաթուղիներ : Այս յօդուածին ղեկավար զրուած է Ամերիկայի մէջ շինուած ճամ- բորդ տանող առաջին երկաթուղւոյն պատ- կերը : Այս պատկերին չոգեչարժ մեքենայն բաղդատելով Ամերիկայի այժմու չոգե- չարժ մեքենային հետ որ երրորդ պատկե- րին մէջ ցուցուած է՝ պիտի տեսնուի չոգեչարժ մեքենայից մէջ կատարուած զարմանալի յառաջադիմութիւնը :

Երբ առաջին անգամ երկաթուղւոյ հա- մար չոգեչարժ կառքեր շինուեցան, շա- տերը կը կարծէին որ թէ կառքին անիւ- ները եւ թէ ճամբուն երկաթի ձողերն ատամնաւոր ըլլալու էին որպէս զի անիւ- ներուն ատամնաւոր երկաթներուն ատա- մանց մէջ անցնէին, եւ այնպէս կառքը ձո- ղերուն վրայ յառաջ երթար : Բայց քիչ ետքը տեսնուեցաւ որ չոգեչարժ կառքը ատամնաւոր չունեցող անիւներով ալ հարթ երկաթներու վրայ կրնայ ծանր բեւ քա- շելով տանիլ : Սակայն ատամնաւոր անիւ- ներ որ հորիզոնական ճամբու համար հար- կաւոր եւ յարմար չեն՝ դաւ ի վեր երկա- թուղեաց համար հարկաւոր են եւ կը դուր- ծածուին : Այսպիսի երկաթուղիներ կան Զուիցերայի եւ Միացեալ Նահանգաց մէջ եւ այս էջին մէջտեղի պատկերն այսպիսի երկաթուղի մը կը ցուցնէ : Այս երկաթու- ղին բարձր լեւան մը գլուխը կ'երթայ : Կառաչուն կը բաղկանայ չոգեչարժ կառ- քէն եւ նստելու կառքէ մը : Շոգեչարժ մեքենայն բարձր երկաթէ շիշի մը ձեւ ու- նի : Կաթնան հարթ երկաթուղւոյ վրայ եղած ատենը ծուռ կը կենայ , բայց երբ կառքը դար վեր կ'երթայ՝ շիտակ կը կենայ : Ճամբորդ տանող կառքը փոխանակ չոգե- չարժ կառքին ետեւէն քաշուելու, առջեւէն վեր կը մղուի, բայց լծնելու ատեն չոգեչարժ կառքն առաջ է, եւ չի թողուր որ կառքը չափէն աւելի շուտով վար լծնէ : Ճամբուն վրայ երկու երկաթի ձողերուն մէջտեղ

ԳԱՐԴԱՆԵՆ, փետր. 12, 1878

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փետ. 28 ըստ Յուլ. և մարտ 12 ըստ Լուս., 1878

ԽԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամէն մարդ անձկանօք կ'ուզէ գիտնալ թէ ինչ են խաղաղութեան պայմանները, բայց այս պայմանները պաշտօնապէս ծանուցուած չեն, եւ կ'ըսուի թէ դեռ պայմաններուն ալ պաշտօնապէս պիտի չյայտնուին մինչեւ որ դաշնագիրը վաւերանայ, եւ այս վաւերացումը Սան Սթեֆանոյի մէջ դաշնագրոյն ստորագրուած օրէն, այսինքն փետ. 19 էն (մարտ 5) մինչեւ 15 օր պիտի կատարուի Մինչդեռ խաղաղութեան պայմաններուն պաշտօնապէս ծանուցուելուն կըստեսնենք, կրնանք հրատարակել միայն այլեւայլ լրագրաց կողմէն խաղաղութեան պայմաններուն նկատմամբ արուած տեղեկութիւնները :

Լա Թուրքի լրագիրը խաղաղութեան պայմաններուն նկատմամբ հետեւեալ տեղեկութիւնը կու տայ .

Պուլխարիա Թուրքիոյ հարկատու իշխանութիւնն պիտի ըլլայ : Պուլխարիոյ իշխանը ժողովրդեան կողմէն պիտի ընտրուի, բայց Եւրոպայի այժմու վեհապետաց ազդականներէն պիտի չըլլայ : Պուլխարիոյ բաղկացեալ ժողով մը յիշեալ երկրին կառավարութեան եղանակին նկատմամբ կանոնադրութիւն մը պիտի պատրաստէ, եւ Բ. դուռն եւ Եւրոպական տէրութիւնք այն կանոնադրութիւնը պիտի վաւերացնեն : Պուլխարիոյ հարկին քանակութիւնը դեռ որոշուած չէ : Այս խնդիրը միւս տէրութեանց հաւանութեամբ պիտի լուծուի, սակայն Պուլխարիա մինչեւ երկու տարի հարկէ ազատ պիտի մնայ : Բուս պաշտօնակալներ պիտի հսկեն Պուլխարիոյ մէջ բարեկարգութեանց զօրծաղրութեանը : Յիսուն հարգար հոգիէ բաղկացեալ Բուսական բանակ մը երկու տարի պիտի մնայ ի Պուլխարիա : Վիտինի, Բուսուզի, Սիլիստրէի եւ Շուսուի ամրութիւնները պիտի վերցուին, եւ նորէն պիտի չլինուին : Մահմետական ժողովուրդը Պուլխարիոյ մէջ հող պիտի կրնայ գնել, եւ Պուլխարիա բնակիչ ուղղով Մահմետականք միւս ժողովրդեան հաւասար իրաւունք եւ պարտք պիտի ունենան :

Նաեւ Պատրիարք կը ծանուցանէ թէ խաղաղութեան դաշնագրոյն մէջ Պուլխարիոյ Մահմետական բնակչաց բոլոր ստացուածքն ապահովուած են : Գիւղերու ժողովներուն մէջ Մահմետականներէն անդամներ պիտի գտնուին : Մզկիթներու եւ թիւրքներու վերաբերեալ հոգերը պիտի թողուին յիշեալ հաստատութեանց, բայց կառավարութեան վերաբերեալ հոգերը Պուլխարիոյ նոր կառավարութեան պիտի ըլլան :

Լեւանդ Հերպալ կ'ըսէ թէ պատերազմական տուեալներ 224,000,000 Անգլիական ոսկի է : Սակայն այս գումարին 176,000,000 ոսկոյն տեղ Բուսիոյ երկիր տրուած է : Փոքուն Ասիոյ մէջ Պաթմաէն մինչեւ Կարս եւ Պայպուր, նաեւ Եւրոպական Թուրքիոյ մէջ Տոպրուզ տրուած են Բուսիոյ : Իսկ 48,000,000 ոսկոյ շահուն տեղ Բուսիա Պուլխարիոյ նոր իշխանութեան հարկը պիտի ընդունի :

Պուլխարիոյ իշխանութեան մէջ պիտի ըլլան Գաղաղայի նաւահանգիստն եւ Տրամա, բայց Տէտէ աղաճ, Սէրէս, Աթուլեան եւ Թեսալոնիկէ Պուլխարիոյ սահմանէն դուրս են : Պուլխարիոյ հարաւային սահմանը Մոնասթիրի մօտէն կ'անցնի, սակայն Մոնասթիր քաղաքը յիշեալ սահմանէն դուրս է : Նիշ, Պելլաոմաք, Իւրկիւզ, Գուրլուզ, Նովիբազար եւ Սենիճա, նաեւ Տրինա գետոյն վրայ Փոքր Զորնիք պիտի տրուին Սերուիոյ, բայց Վիտին Պուլխարիոյ իշխանութեան մէջ պիտի մնայ : Սեւ ծովուն վրայ Մանկալիայէն մինչեւ Դանուբի վրայ Զերնաու-

տա քաղաքը գիծ մը Տոպրուզան պիտի գտնէ Պուլխարիոյ իշխանութեան, եւ Բուսիա եթէ ուզէ Պեսարապիոյ փոխառէն Տոպրուզան պիտի տայ Բուսանիոյ :

Կ'ըսուի թէ խաղաղութեան դաշնագրոյն պայմաններէն մէկուն համեմատ Եւրոպական Թուրքիոյ գաւառներուն խառնուած բարեկարգութիւններն Հայաստանի ալ պիտի արուին, բայց չգիտցուի թէ այն բարեկարգութիւններն ինչպէս պիտի կատարուին :

Նշողոյս լրագիրը կ'ըսէ թէ Ահմատ Վէֆիք փաշա քանի մը երեսփոխանաց, որ հրաժեշտի համար անոր քով գացած էին, տեսնախօսութիւն մը ըրած է, որմէ կը քաղենք հետեւեալ տողերը .

« Գանի որ խաղաղութիւն կնքուեալ պիտուած է ինք, պէտք էր մեզ բանակ-ցութեան սկիւղ մինչդեռ Թաթարիազար-ձըգի եւ Փիլիպպոպոլսոյ մէջտեղ գտնուած մեր բանակները ցրուցան եղած չէին : Երբ պատերազմը հառա մինչեւ Պուսիոյ դռները, մեզի համար Բուսիոյ առաջարկած պայմանները ընդունելէ զատ ուրիշ բան չէր մնար ընելու : Այս ծանր պայմաններէն որ տանեւհինգ յօդուածներէ կը բաղկանային, միայն չորս կամ հինգ յօդուածը կրցանք յապաւել տալ : Այս քանի մը պայմանները կրցանք յապաւել տալ միայն Վեհ. Սուլթանին հայրենասիրական զգացմանց շնորհիւ : Երբ Վեհ. Սուլթանը լսեց թէ Բուսիա քանի մը պահաւոր նաւ կը պահանջէ, յայտարարեց թէ կ'ընտրէ մանաւանդ պահաւորներէն մէկը մտնել եւ անոր հետ օգն ելլել քան թէ պահաւորները յանձնել : Դաշնագիրն երկու օրինակ գրուելով երկու տէրութեանց ներկայացուցիչներուն կողմէն ստորագրուեցաւ, եւ մինչեւ տանեւհինգ օր յիշեալ երկու օրինակները պիտի փոխանակուին : Այսպիսի դաշնագրութեան մը պատասխանատուութիւնը կ'ընայ անոնց վրայ որ կառավարութիւնն այս վիճակին հասուցին : Բայց եւ այնպէս յուսահատուել չենք, այլ մեր երկիրն ներկայ թշուառութենէն ազատելու համար արիւթար աշխատելու ենք : Մեր ներկայ թշուառութիւնը դաս մը ըլլալու է մեզ ապագային համար : »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իկնաթիէֆ զօրապետը Բեդրուպուրէ գացած է խաղաղութեան դաշնագրոյն վաւերացման ներկայ գտնուելու համար : Անոր հետ Բեւուֆ փաշա ալ յատուկ պաշտօնով Բեդրուպուրէ գացած է :

—Անցեալ շաբաթ Բուսուզէն, Սիլիստրէն եւ Շուսուէն Օսմանեան զօրք հասան ի Պոլիս, եւ քանի մը վաղ զօրք զրկուեցան ի Կրեմէ Օսման Նուրի փաշայի հրամանատարութեամբ :

—Կ'ըսուի թէ Բուսիական զօրքն, որ այս վերջին պատերազմին մասնակից եղան, մօտեւ Բուսիա պիտի դառնան ծովով, եւ անոնց տեղ Բուսիական ուրիշ զօրք կու գան :

—Փետ. 20ին (մարտ 4) երկուշաբթի օր Կրանդ զօրապետն Ամերիկայի դեսպանին ապարանքէն ընդունեց այր եւ կին իբր 500 անձինք : Կ. պոլիս բնակող Ամերիկացիներէն եւ նաւահանգիստը գտնուող երկու Ամերիկեան նաւերու պաշտօնակալներէն զատ ներկայ էին Անգլիոյ դեսպանն եւ անոր տիկինն, եւ Անգլիոյ եւ ուրիշ ազգէ շատ պատեւաւոր մարդիկ եւ տիկնայք :

Երեքշաբթի ցերեկ Կրանդ զօրապետը Վեհ. Սուլթանին ներկայացաւ Նըպուք քօքիւն : Ամերիկայի դեսպան, Մ. Մէյ-նարտ, Վեհ. Սուլթանին ներկայացուց զօրապետը : Այս առաւելութեան ներկայ էին Ամերիկայի հիւպատոս Մ. Սքայլըր, եւ Ամերիկայի դեսպանատան ղեկավարական պաշտօնատար Զէյնալիս զօրապետը : Կրանդ զօրապետը Վեհ. Սուլթանին հետ տեսնուելէն ետքը կայսերական արտօնները պատկերով շատ հաւանցաւ անոնց : Վեհ. Սուլթանը գեղեցիկ ձի մ'ընծայ ըրաւ Կրանդ զօրապետին, բայց նա հանդերձ մեծ շնորհակալութեամբ ստիպուած էր չընդունել ընծայն :

Երեքշաբթի երեկոյ ղինուորական գործոց պաշտօնեայ Բեւուֆ փաշա սպարապետի դուռը մեծ կողունք մը տուաւ ի պատիւ Կրանդ զօրապետին :

Զորքաբարձի օր Կրանդ զօրապետն եւ անոր հետ գտնուողներն Ամերիկայի Վանտալիա տնուն պատերազմական շտեմաւով ստիկ մեկնեցան Աթէնք երթալու համար :

—Լեւանդ Հերպալի թղթակիցը կը գրէ թէ նոյ. դեկ. եւ յունվ. ամիսներուն մէջ 9,500 Օսմանեան զօրք մեռան Կարնոյ հիւանդանոցաց մէջ : Կ'ըսուի թէ Կարնոյ բնակիչներէն ալ նոյնչափ մարդիկ մեռած են, ուստի յիշեալ ամիսներուն Կարնոյ մէջ մեռնողներուն գումարն իբր 20,000 հոգի կը հաշուուի : Յունուարի մէջ, երբ օգը շատ ցուրտ էր, իբր 800 ղինուորաց հրաման եղաւ լեռներն անցնելով Երզնի-կեան երթալ, բայց ճամբան ղինուորաց կէսէն անկիւն, գնդապետն, անոր կինն եւ երեք որդիքը մեռան ցուրտէն, եւ միայն իբր 500 ղինուորք հասան Երզնի-կեան : Կարնոյ հիւանդանոցաց մէջ գրա-նուած շատ ղինուորներուն ոտքերը ցուրտէն սառած էին, եւ այն ղինուորաց կեանքն ազատելու համար հարկ եղաւ անոնց ոտքերը կտրել : Եւրոպացի բժիշկներէն շատերը սաստիկ աշխատութենէ, ուստեաց եւ այլ կարեւոր բաներու պակասութենէ եւ հիւանդութենէ շատ նեղութիւն կրած են : Անոնցմէ ոմանք մեռած են, եւ այլք տկարացած ըլլալով դարձած են իրենց հայրենիքը :

Փետ. 8/20ին Կարին բոլորովին պարպուեցաւ : Օսմանեան զօրքը քաղաքեան Երզնիկեան որուն մօտէն կ'անցնի ղինուորակը համար նշանակուած չէրք գիծը : Գաղաքը պարպուելէն առաջ թնդածութեանը զօրքեան շտեմարաններու մէջ, եւ անոնց դռները կնքուեցան Բուսական եւ Օսմանեան հրամանատարաց կնքներով : Խաղաղութեան հաստատուելէն ետքը թնդածութեան պիտի յանձնուին Օսմանեան կառավարութեան : Զօրապետ Մեի-քօֆի եւ Իսմաիլ Հաֆֆի փաշայի մէջտեղ կարգադրութիւն եղած է որ Օսմանեան քաղաքական պաշտօնեայք Կարին մնան որպէսզի քաղաքը կառավարելու համար Բուսաց ղինուորական իշխանութեան օգնեն : Օսմանեան հիւանդ եւ վիրաւորեալ ղինուորները, նաեւ դանդաղ դարմանող վիրաբոյժները Կարին պիտի մնան ցուրտի հարկ ըլլայ : Բուսական զօրքը փետ. 9/21ին Կարին մտան :

—Յոյն սպարապետաց եւ Օսմանեան զօրաց մէջտեղ քանի մը սաստիկ կռիւ տեղի ունեցած է, եւ սպարապետութիւնը Եպիրոսի, Թեսալիոյ եւ Մակեդոնիոյ մէջ կը տարածուի : Լեւանդ Հերպալի մէջ հրատարակուած նամակ մը որ փետ. 16/28 թուականու Աթէնքէն գրուած է, կ'ըսէ թէ տնտեսն սպարապետաց թիւն 5,000 կը հաշուուի : Սակայն այս սպարապետացիները իսկուրի կը կազմեն տարբեր անձանց հրամանատարութեան ներքեւ, որ իրարու հետ չեն համաձայնիր, եւ ընդհանուր հրամանատար չունին : Աթէնքի համալսարանին եւ այլ զօրացաց աշակերտներէն շատեր միացած են սպարապետացիներ : Յունաստանի բանակէն երեք խումբ որոնք ղինուոր, եւ խումբ մը թնդածութեան ղինուոր բանակը թողով սպարապետացի հետ միացած են : Աթէնքի Օսմանեան դեսպանը խոստի բողբոջած է Յունաստանի կառավարութեան յիշեալ կանոնաւոր ղինուորաց սպարապետացի հետ միանալուն դէմ : Յունաստանի կառավարութիւնը խորին ցաւ յայտնած է այս մօտին, եւ պաշտօնէ ձգած է քանի մը պաշտօնատարներ որոնց վրայ կասկած կայ թէ անհաւատութեամբ պատմաւ եղան յիշեալ զօրաց փախչելուն, նաեւ խոստ միջոցներ ձեռք առած է որ այսպիսի բաներ ուրիշ անգամ տեղի չունենան : Յունաստանի պատերազմական զօրքը պաշտօնեայն բանակատեղին սցեզած է ղինուորաց մէջ կարգ եւ հնազանդութիւն հաստատելու համար :

Կրեմէն մէջ այլեւայլ տեղեր քանիցս սաստիկ կռիւներ եղած են Յոյն սպարապետացի եւ Օսմանեան զօրաց մէջտեղ : Ապրա-տամբ ջանացած են նաեւ տիրել Սուս-տայի ծոցը գտնուած ղինուորներն, բայց Օսմանեան նաւատորմը որ հոն կը կենար, սաստիկ կրակ ըրած է սպարապետացի վրայ, եւ ստիպած է զանոնք ետ քաշուելու : Յունաց վերաբերեալ քանի մը փոքր շտեմաւեր պաշար եւ ռազմավեր կը կրեն Կրեմացոց : Կ'ըսուի թէ Օսմանեան նաւ մը յիշեալ շտեմաւերէն երկուքն

ընկղմած է : Կրեմացի սպարապետներէն շատերը յիշեալ կողմէն Յունաստանի հետ միանալու կ'ուզեն, բայց անոնք Թուրքիոյն նորանոր արտօնութիւնները միայն ձեռք բերելու կը ջանան :

Ա. Յ. Լ. Ե. Ա. Յ. Լ. Բ.

Բուսանիոյ երկրաշափեր Տոպրուզ քննելու գացած են, եւ յոյս կայ թէ Բուսանիա պիտի ընդունի Տոպրուզ Պեսարապիոյ փոխարէն : Բուսը սկսած են հանել ծովառումները զոր Դանուբի մէջ դրած էին, եւ մօտեւ Դանուբի մէջ նաւեր երթեւեկել պիտի սկսին : —Զէքաքի իշխանին մարմինը վերադառնալու, եւ Օսմանացի ճամբով Բուսիա փոխադրուեցաւ : Սիւլէյման փաշա դեռ բանտարկուած է Տարտանելի ամրոցներէն մէկուն մէջ, եւ Կ. պոլիս պիտի բերուի գատուելու համար : Բ. դուռը մեծ ուղադրութիւն կ'ընծայէ իր բանակին վերադառնալու, եւ կ'ըսուի թէ Մէհմետ Ալի փաշա Կ. պոլսոյ մէջ սպալապետ կարգուած է : Գաղթականաց օգնութեան համար իբր ամիս մ'առաջ Պոլսոյ մէջ կազմուած համազգային յանձնաժողովը արդէն 14,152 ոսկի հաւաքած է :

Ա. Յ. Լ. Ե. Ա. Յ. Լ. Բ.

Կաթողիկ տէրութիւնները փախաք յայտնած են նոր Պատին որ տեւիկ հաշտութեան տալարապետութիւն մը ձեռք առնէ, եւ ասոր վրայ Պատին արտաքին գործոց պաշտօնէութենէ հրաժարեցուցած է կարգիւնալ Սիւլէյման :

—Փոխանակ դեսպանախոսը որ պիտի գումարէր Պատին Պատին մէջ, որոշուած է տէրութեանց ժողով (գոնիլէն) գումարել Պերլինի մէջ մարտի վերջը : Կը յուսացուի թէ 1856ին Բարիզի դաշնադրութիւնը ստորագրող տէրութեանց առաջին պաշտօնեաներէն ոմանք ներկայ պիտի գտնուին յիշեալ ժողովը, որուն պիտի նախագահէ Պաքարը իշխանը : Կ'ըսուի թէ Յունաստան եւ այլ վրայ տէրութիւնք ներկայացուցիչներ պիտի ունենան այս ժողովին մէջ :

—Անցեալ հինգշաբթի օր Խաղիոյ ազգային ժողովը բացուեցաւ Հոտայ մէջ : Թագաւորն իր ճառին մէջ ըսած է թէ, հիմա որ Խաղիոյ միութիւնն ամուր հիմանց վրայ հաստատուած է, կառավարութիւնը պարտի բարեկարգութիւններ ի գործ դնել : Թագաւորը յարած է նաեւ թէ Բուսիոյ եւ Թուրքիոյ պատերազմին մէջ Խաղիա բացարձակ չէղքութիւն պահեց, եւ թէ տէրութեանց ժողովին մէջ Խաղիա պիտի ջանայ արեւելեան խնդիրը լուծել այնպիսի կերպով որ համաձայն ըլլայ արդարութեան եւ մարդկութեան իրաւունքը :

Վ. Ե. Լ. Ե. Ա. Յ. Լ. Բ.

Բարիզի Անգլիական դեսպան լորտ Լայքնիս Պերլին գումարելի տէրութեանց ժողովոյ մէջ Անգլիոյ կողմէն երեսփոխան կարգուած է : Լորտ Տէրպի ըսած է թէ Անգլիա պիտի ջանայ այլեւայլ ազգաց եւ կրօնից հաւասար եւ արդար իրաւունքը ձեռք բերել :

—Անարատի կոմս Աւստրիոյ ազգային ժողովն 60 միլիոն ֆլորին ուղած է ցումաքային եւ ծովային զօրաց ծախքի համար :

—Կը յուսացուի թէ Նիսիոյ մեծ դուռը մօտեւ Գալիս պիտի գայ, եւ մեծ պատ-րաստութիւններ կ'ըլլան յիշեալ դուռն ընդունելու համար :

—Կը զրուցուի թէ Աւստրիական նաւ մը որ իբր 2,000 Զէքաք կը տանէր Ատա-նա, բռնկած է Գարամանի ծովափերէն մօտ եւ բոլոր ճամբորդները կորուսած են :

—Բուսական նաւերն Ստեփանի եւ Կ. պոլսոյ մէջտեղ կանոնաւոր կերպով երթե-ւեկել սկսած են :

—Ագրիանուպոլսոյ մէջ դեռ 20,000 Մահմետական գաղթականներ կան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետ. 27 և մարտ 11, 1878

Գաղաղայի	9. 8	Բուս. երկր. քաղաք	30.
Գ. Բ. Մ. Բ.	Փոք. Լիւան	100 Կն	
Մեկնուել	106 1	Բուսիոյ քոլ	88 3
Թագաւոր	281	Կարգիւն	87 4
Պերլին ստակ	183	Պրիմոյ	51
Հինգիոց	122	Աղաք. քիւս	109 5

Ամերիկայի միախորաց ընկերութեան կողմէն իմպալիր ծ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՄԵՆ

Ձագմագնիւր, Յալիքեան խոն, Թիւ 12.